№ 58 Հինգշաբթի Մայիսի 29 — 1886 — Հինգշաբթի Մայիսի 29 № 58

ՏԱՍՆ ԵՒ ՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 բուբլի, կէս տարվանը 6 բուբլի։ Առանձին համարները 7 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ». Կամ. Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Կովկասեան ցուցահանդէս. Նամակ Փօթիից. Նամակ Խմբագրին. Նամակ Խմբագրին. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Թիւրքիայից. Նամակ Թիւրքիայից. Արտաքին լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.— ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿՈՎԿԱՍԵԱՆ ՅՈՒՑԱՀԱՆԴԷՍ

Ներկայացնել երկրի գիւղատնտեսական դրութեան ընդհանուր պատկերը, տալ երկրի տնտեսական դրութեան ուսումնասիրութեանը ամփոփ նիւթեր, միջոց տալ որոշ ճանապարհով առաջ մղելու երկրի տնտեսագիտական զարգացումը, — ահա 'ի միջի այլոց այն ընդհանուր նպատակները, որոնց պիտի ծառայէ գիւղատնտեսական ցուցահանդէսը մեր երկրում։ Մենք առիթ ենք ունեցել հրաւիրելու նոյն իսկ Կովկասեան Գիւղատնտեսական ընկերութեան ուշադրութիւնը իր նախաձեռնութեամբ կազմելու Թիֆլիսում գիւղատնտեսական ցուցահանդէս. և չենք կարող չը յայտնել մեր ուրախութիւնը, որ գիւղատնտեսական ընկերութիւնը ներկայումս վճռողական քայլ է անում իրագործելու այդ կարևոր միտքը, որի մասին նոյն իսկ դեռ տարիներ առաջ ընկերութիւնը մտածել, խօսել, ծրագիրներ է կազմել,—բայց տարաբաղդաբար, այդ բոլորը ցանկութիւնների սահմանից չէ անցել։—Մայիսի 26-ի գիւղատնտեսական ընկերութեան ընդհանուր ժողովը զբաղվեցաւ ամբողջովին պ. Դինգելշտեդտի Կովկասեան գիւղատնտեսական ցուցահանդէսին վերաբերեալ զեկուցումով։

Պ. զեկուցանողը իր զեկուցման սկզբում խօսեց մանրամասնաբար այն բոլոր արդիւնաբերական—ձեռագործական ցուցահանդէսների մասին, որոնք տարիների ընթացքում տեղի են ունեցել Եւրոպական զանազան քաղաքներում, սկսած Փարիզից, Լօնդօնից, Վիէննայից, մինչև Բէյնի ժողովրդի երկրորդական քաղաքների բուն տեղական ցուցահանդէսները։ Եթէ աւելացնենք դրանց վրա զանազան նկարչական, գեղարուեստական և կենդանիների ցուցահանդէսները, կը տեսնենք որ Եւրոպան իր ցուցահանդէսների թիւը մի քանի հարիւրների է հասցրել. Ռուսաստանը, մանաւանդ Ռուսաստանի մայրաքաղաքները ևս վերջին ժամանակները սկսել են հետևել Եւրոպային։ Իսկ ներկայում, ինչպէս յայտնի է, ցուցահանդէսներ կազմելը գեղարուեստների, արդիւնաբերութեան, անասնապահութեան, թռչնապահութեան և այլ և այլ ամենայն տեսակ ճիւղերից՝ պահանջ է տարձել Ամերիկայի և Եւրոպայի համար, որտեղ տասնեակ միլիոններ են ծախսվում այդ նպատակով, և որտեղ դոքա տարեկան ծառայութիւն են անում երկրի ուսումնասիրութեան գործին և երկրի տընտեսագիտական զարգացմանը։ Պ. Դինդելշտեդտ խօսելով Կովկասի մասին և յայտնելով որ այստեղ չեն եղել գիւղատնտեսական ցուցահանդէսներ, բացի մի քանի թեթև փորձերից, կանգ առաւ գիւղատնտեսական ցուցահանդէսների կարևորութեան և նշանակութեան վրա մեր երկրի համար։ Զեկուցման նշանաւոր մասը նուիրած էր այդ կէտի բացատրութեանը։—Զեկուցանողը անհրաժեշտ է համարում որ այդ առաջին գիւղատնտեսական ցուցահանդէսը կատարեալ լինի, պարունակէ իր մէջ գիւղատնտեսութեան բոլոր ճիւղերը, և կարող լինի Կովկասի բնութեան հարստութեան և ժողովրդեան տնտեսագիտական զարգացման ամփոփ պատկերը ներկայացնել։ Պարոնը ներկայացնելով մի համառօտ ծրագիր հանդէսի բովանդակութեան մասին, յայտնեց որ դա կարող է ունենալ տասն և ինն բաժանմունք։

Ցուցահանդէսի կազմակերպութեան, ծախսի, պարտաւորութիւնների և գործնական այլ կարևոր մանրամասնութիւնների մէջ զեկուցանողը չը մտաւ, թողնելով այդ առանձին յանձնաժողովի քննութեանը, եթէ ընկերութիւնը սկզբունքով կընդունի իր առաջարկութիւնը, այլ յայտնեց, որ ընկերութիւնը ոչինչ միջոց չը պիտի խնայէ գլուխ բերելու այդ կարևոր գործը, և յոյս յայտնեց որ այդ բանի համար ընկերութեանը կօգնի և կառավարութիւնը, որին ևս ցուցահանդէսը մեծ ծառայութիւն կարող է անել իր ձեռնարկութիւնների համար, և Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը, որի մէջ արդէն այդ մտքերը անկախ կերպով յղացել են, և երկրիս ազնվականութիւնը, որոնց շահերի հետ անմիջապէս կապված է Կովկասի շատ տեղերի տնտեսական բարգաւաճումը։—'Ի նկատի ունենալով որ 1889 թուականին Փարիզում պիտի լինի համաշխարհային ցուցահանդէս, որի պատրաստութիւնները, ինչպէս յայտնի է, արդէն սկսուած են, պ. Դինդելշտեդտ կարծիք յայտնեց, որ ցանկալի է Կովկասեան ցուցահանդէսը գլուխ բերել 1887 թուականի աշնանը, որպէս զի մեր երկիրը ևս պատրաստած լինի Փարիզի աշխարհանդիսին ներկայանալու համար, և Կովկասը կարող լինի ուղարկել այնտեղ իր ներկայացուցչին հարկաւոր պատրաստութիւններով։—1887 թվին աշնանը ցուցահանդէսը բանալու կարևորութիւնը զեկուցանողը հաստատում էր և նորանով, որ, ինչպէս ինքն ասեց, այդ ժամանակ պիտի բարեհաճէ Կովկաս գալ Թագաւոր-Կայսրը։ Կրկին խօսելով ցուցահանդէսի նշանակութեան և օգտակարութեան մասին, պ. Դինդելշտեդտ՝ ողևորված կերպով, ակնարկ գցեց Կովկասեան աղգաբնակութեան մտաւոր, նիւթական, բարոյական վատ դրութեան վրա, և իբրև համոզմունք յայտնեց, որ այդ ցուցահանդէսը ամենամեծ օգուտներ կը բերէ, կապ կը հաստատի Կովկասի զանազան միմեանցից բաժանված ազգերի մէջ, կը մօտեցնի նոցա միմեանց, կը բանայ գիտութեան առաջ մի հարուստ աղբիւր, մատչելի կը դարձնի երկրի ուսումնասիրութեան համար ժողովրդեան կեանքի մէջ թաղնված հարստութիւնները, առիթ կը տայ հաւաքելու Կովկասեան բազմալեզու ազգերի ներքին կեցութեան, աշխարհայեցողութեան բոլոր գանձերը, և կը բանայ հարուստ Կովկասի համար տնտեսական զարգացման մի լայն ճանապարհ, մի գրաւիչ ապագայ, մի աւետեաց երկիր։

Ցաւում ենք, որ չենք կարող համաձայնել պ. Դինդելշտեդտի հետ, ուրախ կը լինէինք, եթէ համոզուել կարելի լինէր, թէ յիրաւի այնքան մեծ բարիքներ պիտի բերի մեր թշուառ ժողովրդեան համար Կովկասեան գիւղատնտեսական ցուցահանդէսը.... Ոչ, այդքան հրաշքներ մենք չենք սպասում ցուցահանդէսներից, մանաւանդ որ մեր երկրի ազգաբնակութեան տնտեսական և մտաւոր զարգացման շատ կարևոր և կենսական պայմանները դեռ հեռու են իրանց զարգանալու կանոնաւոր շաւղից, այնպէս որ ցուցահանդէսները հրաշքներ չեն ծնի անկասկած...

Շատերին յայտնի է ցուցահանդէսների նշանակութիւնը և արժէքը, այլ և աչքի առաջ ունենալով մեր ժողովրդեան ընդհանուր տրամադրութիւնը, այժմեսնից կարելի է որոշել հետևանքները։

Ի հարկէ, ուրիշ բան է ցանկութիւններ յայտնել, ուրիշ բան է իրագործել այդ ցանկութիւնները։ Ցանկութիւնները անսահման են. բայց ափսոս որ մեր ժողովուրդը՝ հանգամանքների չնորհիւ, միշտ ծուռն աչքով է նայում արտաքուստ իրան արած առաջարկութեան վրա, լինի այդ առաջարկութիւնը ամենակարևոր, ամենաօգտակար, ըստ որում նա սովորել է ամենայն բանի մէջ մի ծածկված նպատակ տեսնել։ Եւ այդ կէտից նայելով խնդրի վրա, այո, միայն այդ կէտից, զգում են այդ անվերջ ցանկութիւններ յայտնողները, թէ որքան դժուարութիւն կայ համոզելու մեր ժողովրդեան, թէ «այս բանը քեզ համար լաւ է, և միւսի նման վատ չի լինի»։ Ինքն պ. Դինդելշտեդտ ևս այս բանը լաւ զգում էր, ուստի չեշտելով չեշտեց այս բանի վրա, թէ պէտք է գործը սկսել հիմնաւորապէս, պէտք է ժողովրդեան համոզել, պէտք է ժողովրդեան մատչելի դարձնել ձեռնարկութեան բոլոր նպատակը և օգտաւէտ կողմերը։

Վերջացնելով իր զեկուցումը, պարոնը հրաւիրեց ժողովին ընտրել մի յանձնաժողով հարցի մշակութեան համար, ենթարկելով նորան նախօրէն ընդհանուր ժողովի ընդհանուր նկատողութեանը, յիշեցնելով, որ շատ լաւ կը լինի, եթէ յանձնաժողովը իր ծրագիրը կազմելիս չը մոռանայ վճռել, որ ապագայ ցուցահանդիսի մանրամասն պատմութիւնը և նկարագրութիւնը պատրաստվի, իբրև հարուստ և մշակած նիւթ մեր գիւղատնտեսական գրականութեան համար։

Ընդհանուր ժողովի մէջ տեղի ունեցան երկար առարկութիւններ այդ զեկուցման առիթով։ Զեկուցման դէմ շատերի կողմից մի ընդհանուր կարծիք յայտնվեցաւ, որ նա չէ պարունակում իր մէջ ցուցահանդէսի կազմակերպութեան համար գործնական ցուցմունքներ, այլ միայն բաւականանում է տեսական ցանկութիւններով, և ոգեղված բացատրութիւններով նրա օգտաւէտութեան համար։ Տարիներ առաջ, ասեց իշխ. Զօրջաձէ, ընկերութեան մէջ այդ մասին խօսվել է, յանձնաժողով է կազմվել, ծրագիր է պատրաստվել, թէև մինչև այժմ ամեն բան ծրագրից հեռու չէ գնացել։

Քաղաքագլուխ Մատինօվ յայտնում է, որ զեկուցումը պարունակում է իր մէջ կարևոր՝ կէտեր, և իր կողմից ևս առաջարկում է ցուցահանդիսին ընդհանուր լիակատար կերպարանք տալ։

Պ. Արասխանեան նկատում է, որ ինքն միանգամայն համակրում է ցուցահանդէսի գաղափարին, բայց կարծում է, որ այդ չափով, այդ սահմաններով ցուցահանդէսը դժուար թէ յաջողվի Կովկասում, մեր ժողովրդեան ներկայ դրութեան ժամանակ։

Շատերը ցանկութիւն են յայտնում խնդիրը յանձնել մի յանձնաժողովի քննութեանը, քանի որ ընդհանուր ժողովը որոշ ոչինչ չէ կարող անել, իր ձեռքի տակ փաստեր չունենալով ծուխերի քանակութեան, էքսպերտների և ուրիշ կարևոր պայմանների ունենալու կամ չունենալու համար։

Պ. Խատիսով առաջարկում է իր կողմից առայժմ սահմանափակվել գիւղատնտեսական մի քանի ճիւղերի ցուցահանդէսով, աչքի առաջ ունենալով լիակատար ցուցահանդէս կազմելու մեծ դժուարութիւնները։

Վերջին մտքի առիթով կարծիքները երկուսի բաժանվեցան. մի մասը կամենում էր, որ ցուցահանդէսը լինի լիակատար, ընդհանուր, միւս մասը առաջարկում էր բաւականանալ այս անգամ աւելի կարևոր ճիւղերի ցուցահանդէսով։ Նախագահը այդ հարցը ենթարկեց քուէի։ Ձայների առաւելութեամբ վճռվեցաւ կազմել սահմանափակ ցուցահանդէս։ Դորանից յետոյ ձեռնարկվեցաւ յանձնաժողովի ընտրութիւնը։ Ընտրվեցաւ մի յանձնաժողով, որի մէջ են պ.պ. Դինդելշտեդտ, Մելիք-Ղարագեօզեան, իշխ. Զօրջաձէ և ուրիշները։ Յանձնաժողովը պիտի մշակէ մի ծրագիր ցուցահանդէսի կազմութեան համար և որոշէ ցուցահանդէսի տեղը, ժամանակը, միջոցները, էքսպերտիզան և բովանդակութիւնը։ Յանձնաժողովը պարտաւոր է ներկայ թուականի դեկտեմբերին ներկայացնել իր մշակած ծրագիրը։

Խ. Մ.

ՆԱՄԱԿ ՓՕԹԻԻՑ

Մայիսի 22-ին

Մեր տնտեսական կեանքում մենք տեսնում ենք մի տխուր երևոյթ, այդ այն է, որ տեղացին բոլորովին չէ ուզում միացնել իր բաժանված ոյժերը և միացած ոյժով իր ձեռքն առնել երկրի հարուստ արդիւնաբերութիւնը ու արտահանութիւնը, այլ դրանով օգտվում է օտարը։

Մենք մատնացոյց կանենք, դլխաւորապէս մեր երկրի նաւթի արդիւնաբերութեան վրա. այն ժամանակ, երբ եւրոպացին դեռ չէր իմացած այդ արդիւնաբերութեան մասին, տեղացին մատների միջով նայեց դորա վրա, չաշխատեց միանալ և իր ձեռքն առնել նաւթի արդիւնաբերութիւնը, մինչև եկաւ եւրոպացին, միացրեց մի քանի ոյժեր, խլեց տեղացիներից այդ առևտրի մեծ մասը ու այժմ սպառնում է մնացածները խլել, մանաւանդ այժմ, երբ, ինչպէս լսում ենք, Կասպից-Սեւծովեան նաւթագործարանական ընկերութիւնը անցնելու է ամբողջ աշխարհին յայտնի հարուստ Բօտչիլդ առևտրական տան իրաւասութեան ներքոյ։ Բայց դարձեալ տեղացին հոգ չէ տանում դռնէ ապահովել իր ձեռքում մնացածների գոյութիւնը։

Նոյն վտանգը սպառնում է և մեր գինիներին. մեր այգեստէրերը չեն մտածում օրով առաջ ապահովել իրանց, չեն մտածում միանալ, միացած ոյժերով պատրաստել տեղական գինիները և արտահանել, քանի օտարը չէ մտել այդ կողմերը ևս։

Մի ուրախալի առաջադիմութեան նշան մենք այժմ տեսնում ենք Գանձակում, որտեղ, ինչպէս տեղեկանում ենք «Մշակի» մէջ տպագրված յօդուածներից, կազմվում է մի ակցիօներական ընկերութիւն տեղական գինեգործութիւնը զարգացնելու և արտահանելու օտար երկիրներ և որ ամենագլխաւորն է ակցիօներները կազմելու են տեղական այգեստէրերը։ Այս այն լաւ կողմն ունի, որ ընկերութեան անդամները, ինչպէս անմիջական հետաքրքրվողներ ընկերութեան շահերով, լինելով այգեստէրեր, աւելի սիրով և տոկունաբար կաշխատեն առաջ տանել այդ գործը։ Անկեղծ սրտով ողջունելով այդ ընկերութեանը, ցանկանում ենք տեսնել սորան իրագործված և սրտով նուիրված երկրի տնտեսական այդ ճիւղին։

Ցանկալի է, որ Երևանն էլ մտածէր այդպիսի մի ընկերութիւն կազմելու, քանի դեռ ժամանակ կայ, քանի դեռ երկաթուղին չէ անցել, եթէ ոչ կանցնի Թիֆլիս-Զուլֆեան ենթադրված երկաթուղին և այն ժամանակ ուշ կը լինի։

Այդպիսի բերքերից մենք մատնացոյց կանենք նաև բամբակի վրա, որը փոխանակ ուղարկելու Ռուսաստանի գործարանները և կրկին պատրաստված յետ ստանալու, կարելի է պատրաստել տեղական գործարանում, որը, ի հարկէ, պէտք է չինվի տեղացիների ձեռքով, նոյնպէս միացած ոյժերով։ Տեղական գործարանում տեղական բերքը պատրաստելու օգուտները պարզ են. առաջին՝ որ մենք ստիպված չենք լինի աւելորդ վճարել ճանապարհավարձի համար և երկրորդ՝ տեղական ժողովուրդը աշխատելով գործարանում, կը ստանայ աշխատութեան վարձ։

Կովկասը հարուստ է։ Նա շատ գործարանների նիւթ կը տայ, որոնց կարևորութիւնը զգալի է, ինչպէս օրինակ, շաքարի գործարան Բագուի և Երևանի նահանգներում, չթի և մոմի գործարաններ Երևանի նահանգում, լուցկիի (спички) գործարան Կարսի և Ախալցխայի կողմերում, որոնք հարուստ են իրանց անտառներով, սապոնի գործարան Բագուում և ուրիշ այդպիսի գործարաններ, որոնց մի առ մի գրելը երկար կը լինէր, բայց որոնց կարևորութիւնը զգում է ամեն մի անձն, որը անձամբ տեսած է երկրի բերքը։

Նոյն անտարբերութիւնը, նոյն առանձնական առևտուրը մենք տեսնում ենք մեր երկրի հայաստիկների արտահանութեան մէջ։

Այժմեան հացահատիկներ գնողները, բոլորը եւրոպական՝ Լօնդօնի, Փարիզի, Համբուրգի և ուրիշ քաղաքների առևտրական տներն են, որոնք բացած են իրանց գրասենեակները Թիֆլիսում ևս։ Սոքա գնում են տեղական մանր արտահանողներից, ի հարկէ, ինչպէս իրանք են ցանկանում, և ուղարկում Եւրոպա։ Շատ անգամ ծախող տեղացին ստիպված է ձեռասով և ցածր գնով տալ իր ապրանքը, չը նայելով որ հացակենտրոններում բարձր են լինում գները. և այս լնական է, որովհետև մի քանի հազար պուդերով չէ կարելի բեռնել շոգենաւեր, իսկ միմեանց հետ միանալ,—այդ հեռու է հայերից, որոնք գլխաւորապէս կազմում են հացի առևտրականները։

Արդեօք օգտակար չէր լինի, եթէ տեղացին միանար, մեծ գրամագլուխ դնէր, այժմեան մանր վաճառականներին Կովկասի զանազան կողմերը

ուղարկէր գնելու, բացէր գրասենեակներ եւրոպական հացակենտրոններում, որով թէ ինքը մեծ օգուտ կը վերցնէր, թէ աւելի մեծ քանակութիւն կարտահանէր և հացակենտրոններում գինը բարձրացած ժամանակ, բարձր գնով կառնէր հացահատիկները, որով օգտած կը լինէր և հողագործին։ Ինչպէս տեղական ընկերութիւն, ծանօթ լինելով տեղական պայմաններին, իր շահերը մեծացնելու համար կաշխատէր խրախուսել երկրագործութիւնը, մացնելով նորա մէջ նոր և օգտակար մեքենաներ և այլն։

Ինչպէս լսում ենք, Թիֆլիսի մի քանի հայ կապիտալիստներ մտադիր են ընկերութիւն կազմել, միայն այստեղի եւրոպական տներին հացահատիկներ հասցնելու նպատակով. արդեօք լաւ չէր լինի, եթէ այդ պարոնները սկսէին կազմել մի ընկերութիւն աւելի մեծ դրամագլխով, և տեղական հացահատիկները իրանք ուղղակի արտահանէին։

Տեղական առևտուրը թուլացած է նաև բանկերի բացակայութեան պատճառով։ Վաճառականի գործունէութիւնը պտըտվում է կապիտալի շուրջը, եթէ չը կայ կապիտալ, վաճառականութիւնը մեռած է։ Եւ իրաւ, ինչպէս կարող են առաջադիմութիւն անել Երևանի, Ալէքսանդրապօլի, Գանձակի, Բաթումի պէս 18—22,000 բնակիչ ունեցող քաղաքները առանց բանկերի, երբ ստիպված են այս և այն բիւրօներից և աղաներից վերցնել փոխ 20—25% տոկոսով, այն ինչ Փօթի քաղաքը իր 4,000 բնակիչներով ունի փոխադարձ ընկերութեան բանկ։

Ս. Տէր-Մարտիրոսեանց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Թիֆլիս, 20 մայիսի

1866 թ. մայիսի 4-ին, Մողնուց ս. Գէորգ եկեղեցւոյ Ս. Գայիանեան օրիորդաց ուսումնարանի դահլիճում՝ նախագահութեամբ արժանապատիւ Յարութիւն աւագ քահանայ Սուքանաճեանի, կայացաւ Հայուհեաց Բարեգործական Ընկերութեան ընդհանուր ժողովը։ Ժողովին ներկայ էին 36 անդամ։

Սոյն ժողովին ընկերութեան վարչութիւնը՝ համաձայն կանոնադրութեան 29 յօդուածի ներկայացրեց 'ի քննութիւն և 'ի հաստատութիւն 1885 թ. եւլմտից հաշիւը։ Սոյն հաշիւը քննելուց առաջ վարչութեան անդամ տիկ. Սրբուհի Երիցեանը կարդաց վարչութեան միամեայ գործունէութեան տեղեկագիրը, որից երևեցաւ որ տարուայ սկզբներին քանի որ հայոց ծխական ուսումնարանները բաց էին, վարչութիւնը չէր դադարում կանոնադրութեամբ իրան դծագրած գործերի կատարելուց, բայց նրանց փակելուց յետոյ նա ենթարկվեցաւ անգործունէութեան տաղտկալի վիճակին։ Վարչութեան այս չէզոք դրութիւնը մեծ ազդեցութիւն ունեցաւ և ընկերութեան նիւթական միջոցների վրա, որովհետև նա չը կարողացաւ հրաւիրել ոչ մի նոր մշտական անդամ, չունեցաւ բաւարար թւով տարեկան անդամներ և չը վստահացաւ կանոնադրութեամբ իրան թոյլատրուած պարահանդէսներ և կոնցերտներ կազմել։ Տեղեկագրից երևեցաւ որ թէև հաշվի մէջ նշանակված է տարեկան 60 անդամների վճարը, իսկ նրանց անուանացուցակում աւելացրած են 9 անդամ ևս, բայց սրանց անունները ստացված են ուշ՝ հաշիւը պատրաստելուց յետոյ. ուստի վերջին 9 անդամներից ստացած վճարը վարչութիւնը առաջիկայ հաշվի մէջ կը մտցնէ 'ի շարս ընծայաբերութիւնների։

Վարչութիւնը 1886 թ. համար նախահաշիւ չը կազմեց, որովհետև մինչև այժմ որոշված չէ հայոց դպրոցների խնդիրը, ուստի մտադիր է մի արտաքոյ կարգի ընդհանուր ժողով հրաւիրել երբ այդ խնդիրը կորոշվի։

Վարչութիւնը ցաւ յայտնեց իւր բաղմաչիաստ անդամ օրիորդ Նատալիա Տէր-Յովհաննիսեանի մահուան մասին, աւելացնելով որ հանգուցելոյ յուղարկաւորութեան տխուր հանդէսը նա սրբազան պարաք համարեց պատուելու։

Այնուհետև վարչութեան առաջարկութեան համաձայն՝ ընդհանուր ժողովը հաստատեց 1885 թ. եւլմտից հաշիւը և որոշեց առաջարկել նրան 'ի քննութիւն և 'ի հաստատութիւն նախահաշիւրն՝ երբ հայոց դպրոցների խնդիրը կորոշվի, իսկ մինչև այդ ժամանակ վարչութեան ընթացիկ ծախսերը անել ընկերութեան գումարներից այն չափով որ որոշված է կանոնադրութեան 17 յօդուածի ա. կէտի մէջ։

Յետոյ ընդհանուր ժողովը զբաղվեցաւ վարչութեան նոր կազմակերպութեամբ, որովհետև չորս տարի լրանալու պատճառով, վարչութիւնից դուրս էին գնում չորս անդամ։ Ուստի որոշվեցաւ ընտրել վարչութեան չորս անդամ և հոթը փոխանդամներ։ Ընտրութիւնը կատարվեցաւ տոմսակներով և առաջարկվեցան 37 հոգի, որոնցից ձայնից բազմութիւնը ստացան հետևեալ անձինք 1) իշխ. Կատարինէ Բէհբութեան 35 ձայն, 2) տ. Կատարինէ Եւանգուլեան 34 ձայն, 3) տիկ. Սոֆիա Բաբայեան 34 ձայն, 4) օր. Սոֆիա Փասրեան 28 ձայն, 5) օր. Մարիամ Զիթախեան 27 ձայն, 6) տ. Մարիամ Ծովիանեան 24 ձայն, 7) օր. Մարիամ Մութաֆիեան 23, 8) տ. Վառվառէ Խարազեան 19, 9) օր. Մարիամ Մատինեան 17, 10) օր. Նունէ Սալամբէկեան 17, 11) օր. Շուշանիկ Բայսողոլեան 16, 12) տ. Աննա Ղազարեան 16, 13) օր. Նունէ Բուղդանեան 16, 14) օր. Վառվառէ Միրիմանեան 13, 15) տ. Վառվառէ Եսայեան 12, և 16) օր. Սոֆիա Անանեան 11 ձայն։ Սոցանից իշխ. Բէհբութեան, տիկնայք Եւանգուլեան, Բաբայեան և օրիորդ Փասրեան հրատարակվեցան վարչութեան անդամ, իսկ փոխանդամներ—օր. Զիթախեան, տ. Ծովիանեան, օր. Մութաֆիեան, տ. Խարազեան, օր. Բայսողոլեան և օր. Բուղդանեան։ Օրիորդք Մատինեան և Սալամբէկեանը հրաժարվեցան։ Ժամի $1^1/_2$ արժանապատիւ նախագահը գոցեց նիստը։

Ատենադպիր վարչութեան Ա. Քիչմիշեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Թիֆլիս, 20 մայիսի

«Արձագանք» շաբաթաթերթի № 19 մէջ խմբագրութեան կամ խմբագրի կողմից իմ կազմած և հրատարակելիք ռուս-հայերէն բառարանի վերաբերութեամբ, յանուն հասարակութեան և բաժանորդների, հետևեալ տեղեկութիւնները ցանկանում են իմանալ՝ ա) որքան դրամ է ժողովված, բ) երբ պէտք է վերջապէս սկսվի տպագրութիւնը և գ) ընդհանրապէս ինչ դրութեան մէջ է գտնվում գործը։

Յիշեալ շաբաթաթերթի տուած առիթը ինձ հաճելի լինելով, շտապում եմ յայտնելու, որ բաժանորդագրութիւնը հետևեալ վիճակի մէջ է.

Թիֆլիսում ստորագր. են	44 անձ.	54 օրին.	270 ր.
Ալէքսանդրապօլ »	32 »	74 »	370 »
Կարս »	9 »	9 »	45 »
Աշակերտներ (որոնցից 8 հոգու մի մի բուբլի զիջում է եղել) »	10 »	12 »	50 »
Ընդամենը ստորագ. են	95 անձ.	149 օրին.	735 ր.

Դրամ ստացուել է		ապառիկ
Թիֆլիս »	145 ր.	125
Ալէքսանդրապօլ »	90 »	280
Կարս »	5 »	40
Աշակերտներից »	45 »	5
Ընդամենը ստացուել է	285 ր.	ապառիկ 440 ր.

Մինչ այսօր վերջնական տեղեկութիւն չէ ստացուել միայն Ախալցխայից և Ադուլիսից, իսկ այլ քաղաքներ բաժանորդագրական թերթ դեռ ևս չէ ուղարկված։

Վերոյիշեալ աղիւսակից ընթերցողը պարզ տեսնում է, թէ որքան փող է ժողովված և թէ դրամի կանխիկ վճարումը պարտաւորական չէ եղել, ինչպէս որ յայտնել է «Արձագանքը»։

Գալով մնացած երկու հարցերին, պատիւ ունեմ յայտնելու, որ տպարանատէր պ. Մարտիրոսեանցի հետ տպագրութեան պայմանների մասին վերջնական համաձայնութիւն կայացել է արդէն. բացի դրանից ռուսերէն տառերը յատկապէս պատուիրուած է Գերմանիայի Ֆրանկֆուրտ քաղաքում (Մայն գետի վրա) և հայերէն մի քանի տառերը բարեփոխելու յանձն է առած յիշեալ պարոնը։ Ընտիր թղթի մատակարարումը յանձն է առած պ. Բաղդասար Աբովեանցը։ Իսկ գրաքննական վարչութիւնից կարևոր արտօնութիւնը վաղուց արդէն ձեռք է բերուած։ Հետևապէս բոլոր կարևոր նախապատրաստութիւնները տեսնված են և ես միայն ռուսերէն տառերի ստացմանն եմ սպասում, որ տպագրութիւնն սկսեմ և մեծ յոյս ունեմ որ այդ բանը երկու շաբաթից յետոյ անպատճառ տեղի կունենայ։

Բաժանորդագրութեան սկզբից մօտ տարի ամիս է անցկացել և այդ ժամանակն էլ 'ի զուր չէ կորել գործի համար։ Ես աշխատել եմ աւելի լրացնել նրա մի քանի մասերը, մանաւանդ ռուս լեզուի մէջ այժմ գործ դրուած օտար բառերի հայերէն նշանակութիւնները որոնելով, նաև արհեստից ու բժշկական գիտութեանց վերաբերեալ մասերը զարգացնելով։ Տպագրութեան յետաձգութեան մի պատճառն էլ եղել է գործին հմուտ այստեղի և ուրիշ քաղաքների մի քանի բարեկամներիս խորհուրդը չը շտապել այսպիսի մի դըժուարին ձեռնարկութեան մէջ 'ի վնաս նպատակի։

Բացի դրանից բաժանորդ դրուող յարգելի պարոնները երևի չեն մոռացել, որ թերթի ճակատում կային և հետևեալ տողերը՝ «եթէ բաժանորդների թիւը հասաւ երեք հարիւրի, բառարանը անյապաղ կը յանձնեմ տպագրութեան և այդ մասին պատիւ կունենամ լրագիրների միջոցաւ ծանուցանելու հասարակութեան։» Համեմատելով ստորագրուած օրինակների թիւը սպասածի հետ և 'ի նկատի առնելով վերևում ասածներս, յուսամ յարգելի բաժանորդներին հասկանալի կը լինի մինչ այսօր տեղի ունեցած լուութեանս պատճառը։

Յուսամ այսքանը բաւական կը լինի 'ի միամտութիւն նոցա, որոնք վստահութիւն ունեն իմ վրա և կարող են սպասել, 'ի նկատի ունենալով գործի ծանրակշռութիւնը։ Իսկ անհամբերները և վստահութիւն չունեցողները կարող են դիմել այն անձանց, որոնց մօտ ստորագրուել են և նոցա միջնորդութեամբ անկորուստ յետ կը ստանան իրանց բաժանորդագինը։

Առիթից օգուտ եմ քաղում խնդրել այն անձանց, որոնք ցանկանում են նպաստել բառարանիս տպագրութեանը դրամով, խորհրդով և բառեր ուղարկելով, կամ մասնակցել բաժանորդագրութեանը (որ 5 բուբլի է), դիմել ինձ հետևեալ հասցէով՝ Тифлисъ. Михайловская ул. № 147. Доктору Абесолому Ивановичу Іоаннисянцу.

Իսկ «Արձագանքի» խմբագրութիւնը յուսամ այս բացատրութիւնը ամբողջապէս կարտատպէ իր առաջիկայ համարում 'ի միամտութիւն իր ընթերցող բաժանորդների և հետաքրքիր հասարակութեան։

Աբիսողոմ Յովհաննիսեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Մայիսի 26-ին կատարվեցաւ ԹԻՖԼԻՍԻ ռուսաց հոգևոր Սեմինարիայի հանդուցեալ րէկտոր, ոճրագործութեան զոհ գնացած աւագ քահանայ Զուդեցկու յուղարկաւորութեան հանդէսը դէպի Կուկիայի եկեղեցին։ Յուղարկաւորութեանը ներկայ էին՝ իշխան կառավարչապետը, վրաց էկզարխը, բարձր աստիճանաւորները և քաղաքիս հասարակութեան ահագին բազմութիւն։ Հանգուցեալը թաղվեցաւ Կուկիայի ռուսաց եկեղեցու գաւիթում։ Սեմինարիայից մինչև եկեղեցին դագաղը ձեռքերի վրա էին տանում ռուսաց հոգևորականները։

—

Մայիսի 26-ին, երեկոյեան 10 ժամին, մի մարդ ընկնելով Սաղի վրա անցնող ձիաքաշ երկաթուղու (կոնկայի) վագոնի տակ, սպանվեցաւ։

—

Մեզ գրում են ՓՕԹԻՑ հետևեալը։ «Այստեղի մայիսեան տօնավաճառի ժամանակ եղաւ և ժողովրդական դնտակախաղը, որ այսպէս է կատարվում. ժողովուրդը բաժանվում է երկու խմբի՝ մինդրելիների և գուրիացիների, որոնք նշանակում են իրանց սահմանները։ Նախապէս քահանայի ձեռքով օրհնված գնտակը ղցվում է ժողովրդի մէջ և ահա ամեն մի անձն, որ կարողանում է վերցնել գնտակը, աշխատում է փախցնել այն կողմը, որ խմբին ինքն է պատկանում։ Այսպիսով իրար ձեռքից խլելով, գնտակը տանում, դցում են այս կամ այն կողմը, մինչև վերջնականապէս մի որ և է խումբ, որ ի հարկէ, ուժեղ է, անցկացնում է սահմանը և յաղթանակը այդ խմբի կողմն է։ Այս տարի յաղթանակը տարան մինդրելները, որ մեծ պարծանք է համարվում առանց այն էլ այդ հպարտ և պարծենկոտ ժողովրդի համար։ Խաղին մասնակցում էին ոչ թէ միայն ամբոխը, բայց և փօթիի նշանաւոր վաճառականները և իշխանները, ոմանք ձիերով անգամ։ Ինչպէս պատմում են, ուրիշ տարիներում շատ անգամ կռուով և նոյն իսկ մարդասպանութիւններով է վերջացել այդ խաղը»։

—

«Моск. Вѣдом.» լրագիրը հաղորդում է, որ Գեղարուեստական ճեմարանը մտադիր է շուտով բանալու Կիևում նկարիչների համար ապատարան, որի մէջ կը լինեն գրադարաններ, պարապելու դահլիճներ և այլն։

—

Վերջին ժամանակներս պատահեցան ԹԻՖԼԻՍՈՒՄ ձիերին թունաւորելու մի քանի դէպքեր։ Այդ դէպքերի վրա ոստիկանութիւնը ուշադրութիւն դարձնելով, մեղադրեց քաղաքիս թուլուխչիներին, որոնք բնակիչներին ջուր են մատակարարում և մինչև անգամ նրանցից մի քանիսին պատասխանատուութեան ենթարկեց ու պատժեց։ Կարծում են որ թուլուխչիները այն նպատակով են թունաւորում ձիերին, որ ոչ ոք, բացի նրանցից, չը զբաղվի ջրկիրութեամբ։ Թունաւորված ձիերը մեծ մասամբ պատկանում են այնպիսի անձանց, որոնք պարապում են տակառներով ջուր կրելով։

—

«Արձագանքում» կարդում ենք, որ ֆրանսիացի պ. Ժիւլ Մուրիէ, որ վերջին ժամանակներս հայերի և վրացիների մասին մի քանի գրուածներ է հրատարակել, ցանկութիւն ունի հրատարակել Թիֆլիսում մի լրագիր ֆրանսերէն լեզուով «Revue Industrielle et Commercial du Caucase» (Կովկասի առևտրական և արհեստագիտական տեսութիւն) վերնագրով։ Պարոնը արդէն խնդիրք է տուել տպագրական գործերի գլխաւոր վարչութեանը յիշեալ լրագրի թոյլտուութիւնը ստանալու համար։

—

ԲԱԳՈՒԻՑ մեզ գրում են. «Ամսիս 10-ին Մարդասիրական ընկերութեան դահլիճում պ. Ճաղարբէգեան տուեց մի գրականական երեկոյ հետևեալ ծրագրով. 1) Մեսրոպ վարդապետ (հայկական բարոյական վերածնութեան դար), 2) Ժամանակակից խորհրդածութիւնք, 3) Մարմնամարզութիւն և 4) Զորս հսկայ (քանաստեղծութիւն Բարխուդարեանցի)։ Մուտքը նշանակված էր 20 կոպէկից մինչև 1 բուբլի։ Փոքրիկ դահլիճի մի երրորդ մասը հաղիւ էր բռնված։ Երեկոն բաւական տաղն անցաւ և այդ հանգամանքը պէտք է վերագրել երկու պատճառներին. նախ որ պարոն դասախօսը խօսում էր մեծամասնութեան համար անհասկանալի ոճով, գործ էր ածում ահագին պարբերութիւններ, որոնք մթնացնում էին միտքը, սիրում էր փայլել գրաբառ բառերով։ Առհասարակ լեզուի կողմից պարոնը բոլորովին չէր աշխատում յարմարվել իրան լսող հասարակութեանը։ Երկրորդ՝ պարոնը իւրաքանչիւր նիւթի վրա շատ էր կանգնում և առհասարակ նիւթի հետ սերտ կապ չունեցող մանրամասնութիւնների մէջ էր մտնում։ Շատերը դասախօսութեան կիսում թողեցին դահլիճը և հեռացան, իսկ կային այնպիսիներն էլ, որոնք ննջում էին։ Այդ վերջին հանգամանքն էր պատճառը, որ դասախօսը չը կարողացաւ բոլոր նիւթերի մասին խօսել, այլ ստիպվեցաւ ծրագրին հակառակ կարճացնել նիւթերը և բոլոր նիւթերի մասին չը խօսել ամենևին։ Կարծում ենք որ կարելի էր կարդացած ամեն մէկ առարկայ առանձին երեկոների նիւթ լինել։ Ի վերջոյ պէտք է ասել որ թէև գնները մատչելի էին, բայց մեր արհեստաւոր դասակարգը դարձեալ բացակայ էր դահլիճից. նա դեռ պատրաստ չէ դասախօսութիւնների և գրական երեկոների պէս բաների համար փող տալ։»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԲԻԱՑԻՑ

—

Կ. Պոլիս, 13 մայիսի

Պոլսոյ հայոց համար ցնծութեան օր մ'է. Կարկուռեան դատը կը խոստանայ յաջող վախճան մը։ Նախորդ նամակս մը գրած էինք թէ Պատրիարքարանը կը պահանջէ որ կառավարութիւնը ջնջէ 'ի նպաստ Կարկուռի տրուած վճիռը, իբր ապօրինաւոր և թէ Պետական խորհրդոյ օրէնսդրական ճիւղն կը զբաղի այդ խնդրով։ Այժմ կը տեղեկանանք թէ Պետական խորհուրդն օրինաւոր գտած է Հայոց Պատրիարքարանի պահանջումն և միաձայնութեամբ որոշած է որ ապօրէն է այն վճիռն որ դրուած է 'ի նպաստ Կարկուռի։ Հողային խնդրոց մէջ քրիստոնեայ Պատրիարքները

պէտք է որ դատին Շէյխ-իւլ իսլամի ատեանն, ի ներկայութեան նոյն ինքն Շէյխ-իւլ-իսլամին:

Կարկուռ շատ աշխատեցաւ որ Պետական խորհուրդն ուրիշ կերպ վճիռ տայ, բայց Հնորհիւ Պատրիարքի աշխատութեանց և Նուրեան էֆէնդիի մեծամեծ ջանքերուն խնդիրն ի նպաստ մեզ վճռուեցաւ: Նուրեան էֆէնդի Քաղաքական Ժողովոյ ատենապետն է և միանգամայն Պետական խորհրդոյ օրէնսդրական ճիւղին անդամ, և թէպէտ իրեն համակրողներէն չենք, բայց և այնպէս ինչ որ լաւ գործ կընէ պէտք է լաւ ըսել: Այս Երուսաղէմի խնդրոյն մէջ Նուրեան բոլոր իւր գործունէութիւնը, բոլոր իւր տաղանդը փայլեցուց և յաղթանակ ձեռք բերաւ:

Յաղթանակը մեծ է նաև Պատրիարքի համար և իւր ազդեցութիւնը կը բարձրանայ յաչս աղգին: Սակայն պէտք չէ կարծել որ խնդիրն վերջացաւ: Այժմ վերսին պիտի սկսի դատը Շէյխ-իւլ-իսլամի դռանն, կրնայ ըլլալ որ դատը շահինք, կրնայ ըլլալ որ կորսնցնենք: Սակայն իրաւունքը մեր կողմն ըլլալով և Պատրիարքն ալ կարող ըլլալով կարկուռէն աւելի ազդեցութիւն բանեցնել, շատ հաւանական է որ դատը վերջնական կերպով շահինք, և Երուսաղէմի Հայոց վանքը մեծ կալուածի մը տէրը լինի:

Շատ հետաքրքրական է այս դատին անցեալն: Երևակայեցէք որ մինչև վերջի ժամանակներս Հայոց մէջ ոչ ոք գիտէր թէ Երուսաղէմ այդպիսի կարևոր հող մը ունի և թէ այդ հողը խնդրոյն ներքև է: Երուսաղէմի միաբանութիւնն ամենևին ձայն չէր հանած, վասն զի կը վախէր թէ երբ աղգն իմանայ որ վանքն այդպիսի մեծ կալուած մը ունի, այնուհետև այլ ևս կը դժկամակի վճարել Երուսաղէմի պարտքն: Այդ խելօք միաբանները լաւագոյն համարած էին կորսնցնել մեծ արժէք ունեցող հող մը քան թէ այդ հողին դատը շահելով զայն վաճառել և իրանց պարտքը վճարել: Ազգը կաթնատու կով է. ողջ ըլլայ. պարտքերը կը վճարէ:

Երուսաղէմի վարդապետներէն ոմանք եթէ մի քիչ օրէնք գիտնային, իրենց ալ շահաւոր կը լինէր, ազգին ալ: Ահա ուրիշ հողային խնդիր մ՚ալ: Պօլսէն մի քիչ հեռու Եալօվա ըսուած տեղը Երուսաղէմի վանքն ունի ընդարձակ ագարակ մը, այժմ կառավարութիւնը, քաջալերուած Կարկուռի օրինակէ, կուզէ գրաւել զայն: Այդ ագարակին մէկ մասին մէջ կառավարութիւնը բնակեցուցած է ժամանակաւ Ռումելիի գաղթականներ, այժմ կուզէ որ բոլորովին գաղթականաց յատկանայ: Այս նպատակաւ Հայոց իրաւունքներն անտես կընէ: Փաստաբան մը մեկնած է Եալօվա այդ դատին համար:—Առայժմ ուրիշ հոգերով չենք տառապիր: Երանի՜ մեզ:

Փոքր հոգ մը լինի թերևս կաթողիկոսական ցանձնաժողովոյ աշխատութիւնն: Նոյեմբեր 1-էն ի վեր Ազգ. Ժողովը հետամուտ է ընտրել կաթողիկոսական ցանձնաժողով մը, որոյ նպատակն ըլլայ բանակցել Վ.Եմ. Կաթողիկոսի հետ եկեղեցւոյ վերաբերեալ մի քանի խնդրոց մասին: Այդ ցանձնաժողովը վերջապէս ընտրուեցաւ ամբողջովին մայիսի 8-ին: Ազգ. Ժողովը ընտրեց եօթը անդամներէ ցանձնաժողով մը: Այդ ընտրութեան չը մասնակցեցան մի քանի երեսփոխանք որք արդէն մեծամասնութեան հակառակ էին: Նոր ցանձնաժողոյ անդամներն են՝ Խորէն Նար-Պէյ եպիսկոպոսը, Մկրեան տէր-Յովհաննէս քահանայն, Տէր-Սարգսեան տէր-Սահակ քահանայն, իսկ աշխարհականներէ պարոնայք

Մերէեմ-Գուլի Յարութիւն, յաւաջադիմական կուսակցութեան պետը:—Յովհաննէս Նուրեան, Քաղ. Ժողովոյ ատենապետը: Տօքթ. Թիրեաքեան, Ազգ. Ժողովոյ նախկին ատենապետ և խելքը գլուխը մարդ. Կարապետ Իսթիւճեան, «Մասիսի» նախկին խմբագիրը:

Նոյն նստին մէջ Ազգ. Ժողովը չնորհակալութեան քուէ տալով պ. Սպարթալեանի, հռչակեց զնա ԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵՐԱՐ: Վարչութեան կողմանէ եկած տեղեկագիր մը բոլորովին լուռ էր Մեկքիսեդէկ Սրբազանի մասին:—Ինչպէս գիտէք պ. Սպարթալեան մեծ գումար մը ծախս ընելով կը կառուցանէ Իզմիրի Մեսրոբեան վարժարանը:

Նոյն նստին Ազգ. Ժողովը նկատողութեան առաւ Պատրիարքարանի տարեկան ելևմտացոյցը: Ըստ այդ ելևմտացոյցին Պատրիարքարանը պիտի ունենայ ներկայ տարւոյս մէջ 85,000 ր. եկամուտ և 62,000 րուպլիի ծախս, որով 23,000 րուպլիի մօտ պիտի աւելնայ: Ոսկի դար: Մենք կը վախնինք թէ ոչ միայն 23,000 րուպլի չաւելնայ, այլ նաև գուցէ այնքան ալ պակսի:

Այդ նստին ուրիշ հետաքրքրական հարց մը ծագեցաւ: Երեսփոխան մը կուզէր տեղեկանալ թէ «արդեօք ստոյգ է որ Աղթամարայ Խաչատուր Կաթողիկոսին հրամանաւ խիզանցի Յակոբ եպիսկոպոս Ճգնաւորեան ծերունի եկեղեցականը բանտարկուած է, Աղթամարայ վանքէն անցեալ տարի կատարուած 7—800 ոսկոյ գողութեան մը պատճառաւ:»

Այս հարցման տրուած պատասխանի մէջ Քաղաքական Ժողովոյ ատենապետը կըսէր թէ՝ Պատրիարքարանը պարտաւորուած էր պաշտպանել ազգային իրաւունքներն նոյն իսկ ազգային իշխանութեանց դէմ:

«Դժբաղդաբար, ըսաւ Նուրեան էֆէնդի, ստոյգ են յառաջ բերուած ցաւալի իրողութիւնք: Աղթամարայ վանքին մէջ գողութիւն մը տեղի ունեցեր էր և Խաչատուր Կաթողիկոս՝ որ առաջինն պէտք է հանդիսանայ իբր նախանձախնդիր ազգային և եկեղեցական իրաւանց պաշտպանութեան, տեղական իշխանութեանց դիմելով բանտարկել տուած էր յիշեալ եպիսկոպոսն: Այս պարագային մէջ, Ս. Պատրիարք հայրերնիս բոլոր ճգամբ կաշխատի ազգին իրաւունքները պաշտպանել ազգային իշխանութեան մը դէմ և Յակոբ եպիսկոպոս արձակուած է: Միւս կողմէ, Վարչութեան որոշմամբ, կարնոյ դեր. Առաջնորդն որ այս օրերը Էջմիածին կերթայ եպիսկոպոսական ատիճան ստանալու, վերադարձին Աղթամար պիտի երթայ և տեղւոյ վրայ քննութիւն մը պիտի կատարէ: Տարակոյս չունինք թէ Օրմանեան Հօր նման ազնուրջ եկեղեցականի մը քննութիւնք պիտի լուսաբանեն խնդիրը:»

«Արևելք» հրատարակեց մայիսի 1-ին պատասխան մը «Մշակ»-ի «Երկու հասարակութիւնների փոխադարձ յարաբերութիւններ» յօդուածին: Այդ յօդուածն յոյժ քաղաքավարական է, բաւական խնամօք գրուած և ամէն ջանք եղած որպէս զի երկու հասարակութիւններու մէջ անհաչտութիւն չը տիրէ:—Հազիւ մի քանի քիչ թէ շատ անդէպ բառեր սպրդած են:—Այս յօդուածի մասին կը խօսինք ուրիշ առթիւ:

Հայկակ

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՑԻՑ

Զմիւռնիա, 15 մայիսի

Ներկայ նամակովս կուգամ մեր ռուսահայ եղբարց ծանօթացնել Զմիւռնիա քաղաքին և տեղւոյն հայ հասարակութեան հետ:

Զմիւռնիա, տաճկական բազմամարդ այս քաղաքը եւրոպական շինութեամբ, յարմար նաւահանգիստով և ճոխ հարստութեամբ չէ պատասխանում իր դրսի փայլին, այն չէ ինչ որ կը խօսեն անոր հայ բնակիչներու մասին թէ Հայաստանի մէջ և թէ այլ հայաբնակ քաղաքներում: Թէ Հայաստան և թէ այլ տեղեր Զմիւռնիոյ մասին կը խօսեն չատ չափազանցեալ, իբրև թէ ամենաազդասէր և քաղաքակրթեալ հայերը Զմիւռնիոյ հայերն են և անոնք պիտի պակեն հայոց ազգի յոյսը: Բայց և այնպէս օտարականները Զմիւռնիա գնալուց և հայ ժողովուրդի կեանքը ուսումնասիրելուց յետ, բոլորովին հակառակն են գտնում ինչ որ կը գովաբանեն անոր մասին այլ տեղեր: Այո՛, Զմիւռնիոյ 80,000 հայ բնակիչներն ունեն մէկ եկեղեցի գերազանցող իր գեղեցկութեամբ Հայաստանի ամեն եկեղեցիներուն, աղքսյին Լուսաւորչեան հիւանդանոց, հայ ընթերցատուն, օրիորդաց հոյակապ գեղեցիկ դպրոց և աղայոց դըպրոց, որը նոր վերաշինվում է Յովհաննէս Սպարթալեանի հաշուով և կատեն որ մինչևի 50,000 ր. ծախս պիտի ունենայ: Բայց պէտք չէ խաբվիլ ադոնց գեղեցիկ եկեղեցիով, հիւանդանոցով և դպրոցներով, ասոնք միայն շինուած են ուրիշներին շլացնելու, ուրիշներին առջև պարծենալու ազգասիրութեամբ և նմանուելու եւրոպացիներին: Բայց միթէ չապօներով, ձեռնափայտերով և ակնոցներով կարելի է եւրոպացի ձևանալ, որը նշանաբանն է Զմիւռնիոյ հայ երիտասարդութեան, կամ միթէ կարելի է գեղեցիկ եկեղեցիով, հիւանդանոցով և հոյակապ դպրոցներով հաւասարուիլ եւրոպացիներին, քանի որ դատարկ է մէջերնին. գեղեցիկ շինութիւնը միայն շինութիւն կը մնայ, այլ պէտք է գեղեցիկ և գործնական ուսում ու գիտութիւն: Զը նայած անոր որ դպրոցները 10,000 րուբլի եկամուտ ունին և որ Ցաճկաստանի մէջ վարժապետները չատ քիչ ամսականով են ծառայում, տղաներին զարգացնող ոչ մի առարկայ չէ աւանդվում դպրոցին մէջ, ըստ մեծի մասին աւանդվող առարկաները լեզուներ են և դըպրոցները չունին իրանց պարտականութիւնը ճանաչող գրեթէ ոչ մի ուսուցիչ: Ասոնք վարժապետութիւնը ապրելու միջոց են ճանաչում և բոլոր վարժապետներն էլ հացի համար այստեղ կը պարապվին, իսկ ինչ որ վերաբերվում է գրագէտներին, անոնք էլ բացի գաղիական սիրահարական վէպեր կարդալուց, ուրիշ ոչինչ չեն անում: Հայոց դպրոցը կը յաճախեն ըստ մեծի մասին միջին և աղքատ դասի ծնողաց որդիները, հարուստները իրենց տղաները եւրոպական կոլեժներում կամ իրենց մաղաղիններում կը դաստիարակեն և չը նայած Զմիւռնիոյ հայոց այնքան մեծ հարստութեանը, ոչ մի հարուստ գտնէ մի որդեգիր անդամ չունէ Եւրոպիոյ մէջ բարձր ուսում ստանալու նպատակով. և քանի որ անոնք կրթութեանը ոչինչ նշանակութիւն չեն տալիս և իրենց որդիքները մաղաղինների մէջ են կրթում,—ապա ուր մնաց ուրիշների զաւակները:

Զմիւռնիոյ հայերը յոյներին ճոխաներն են: Յոյնը զարկեց հայուն, հայը պիտի լռէ. յոյնը հայհոյեց հային, հայը պիտի օրհնէ անոր, պիտի պատուէ յոյնին. յոյն երիտասարդը փողոցով անցնելիս հայ կնոջ պատիւը վիրաւորում է, իսկ այդ հայ կինը իր զաւակին յոյն կնոջ կաթով է մնուցանում. յոյն ծնողները քարոզում են իրանց զաւակներին ատել հայերին, իսկ հայ ծնողքը ստիպում են իրենց զաւակաց չուտ մը յունարէն խօսել սովրիլ, որպէս զի չուտ մը ոսկիներ շահեն. հայ պանդուխտը յոյնին կը դիմէ գործ խնդրելով, կուտէ մէկ աքացի, մէկ ապտակ և կը հեռանայ, իսկ յոյն երիտասարդը հայուն դիմելուց գործի մասին՝ հայը կը հեռացնէ իւր հայ գործակատարը և անոր տեղը յոյնը կը նշանակէ: Վասն հաստատութեան գրածներիս առաջ բերինք այստեղ մի դէպք որ հէնց այս քանի օրերս իմ աչքիս առջև պատահեցաւ. մէկ խաչչի յոյն սովորութիւն ունէր արած Զմիւռնիայի Խաչատուր աղա կոչուած հայ վաճառականի պանդոկի մէջ միշտ քանի մի կով կամ եզ կապել և այդ պանդոկն էլ գտնվում է հայոց առաջնորդարանին ետև Սէյիանէ-Բօղազի կոչուած փողոցին վերայ: Ամիսը լրանալուց չէ վճարում այդ յոյնը Խաչատուր աղա պանդոկապետին սահմանեալ վարձը և Խաչատուրը ստիպվում է խնդրել անորմէ իւր վարձը: Եւ ահա յոյնը, պանդոկի վարձը վճարելու տեղ, վճարեց անոր կնոջը երեխաներին, եկեղեցուն, ամբողջ ազգութեանը՝ հազար ու մի տեսակ հայհոյանքներ: Իսկ նոյն Խաչատուր աղան, որ մշեցիներին և վանեցիներին մորթը կը հանէ, եթէ դեռ մի քանի օր էլ ամսէն առաջ չը վճարեն քիրահները, լուռ և մունջ մնաց քսանի չափ հայերի հետ միասին, մինչև որ այդ յոյնը հայհոյելուց յագեցաւ և գընաց: Ես յունարէն չը գիտենալով, որպէս զի յոյնի խօսածները իմանայի, հէնց որ յոյնը գնաց և այդ քսանի չափ հայեր առիւծ դառան և սկսեցին ախ ու վախ անել, մօտեցայ անոնց, որ լաւ յունարէն գիտէին և նոքա ինձ թարգմանեցին յոյնին խօսածը, միանգամայն աւելացնելով թէ այստեղի ամենապատուաւոր հայը անգամ ենթակայ է յոյն սրիկայի հայհոյանքին: Յետոյ մօտեցայ Խաչատուր աղային և հարցրի, թէ ինչ ստիպեց քեզ մուկ դառնալ յոյնի առջև և եթէ անձամբ հայու պատիւը վիրաւորելու համար յոյնին ցոյց չը տուիր քո մարդկութիւնը, գոնէ բողոքէիր կառավարութեանը, կամ եւրոպական հիւպատոսներին: «Եթէ բողոքեմ անոր դէմ, պատասխանեց հայը, նա ինձ կը մեռցնէ:»

Շատ մը տեղեր Թիւրքիայի մէջ պատահեցայ և ամեն տեղ ռուսահայ երիտասարդների հանդիպեցայ: Այն ռուսահայ երիտասարդները, որոնք որ իրենց երկրին մէջ կը մնան, գոնէ սոված երբէք չեն անցնում օրերնին, իսկ անոնց որ տեսայ Հայաստանից դուրս, ինչպէս Զմիւռնիոյ մէջ և այլ քաղաքներում՝ պատառոտած հագուստով, առանց գործի և քանի մի օրերով սոված են պտըտում: Այստեղ մեր տաճկահայ եղբայրները արդէն քրիստոնէութեան դէմ են գործում, որովհետև, երբոր յոյնը երեսի մի կողմին է ապտակում, հայը միւսը կողմն է դարձնում, իսկ երբոր ռուսահայ պանդուխտներն այստեղ են գալիս, թիւրքիահայը վռնտում է նրանց և սոված թողնում: Այսպիսի թշուառութեան մէջ են ոչ թէ միայն նորեկներն ի Թուրքիա, այլ և անոնք, որք քանի տարիներով Թուրքիայի մէջ են: Զմիւռնիոյ և այլ հայ գաղթականներու մէջ այլ ևս մարել է հայութեան սիրտը և զգացումը: Ռուսաստանցի հայը, երբ աղքատ էլ լինի, իր կեանքը սովից ազատելու համար թող չը թռչի այդքան հեռու, չը գայ հեռաւոր հայ գաղթականութիւնները, որոնց մէջ հայութեան նշոյլը այլ ևս մնացած չէ և որոնք խապառ անսիրտ ու անհոգի են դարձած:

Ուրիշ անգամ աւելի մանրամասնաբար կը գրեմ ձեզի, իսկ Կ. Պոլսի համար գրելը թողնում եմ անոնց գրագէտներին և լրագիրներին:

Ճանապարհորդ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Աւստրիայում լանդշտուրմի մասին ներկայացրած օրինագիծը ընդունվեցաւ և այդ հիման վրա Աւստրիայի զօրքի թիւը կաւելանայ 400,000 հոգով:

—Իտալիայում եղած ընարութիւնները այնքան էլ նպաստաւոր չեն Դեպրէտիսի մինիստրութեան համար, որովհետև նրա կողմնակիցները աչքի ընկնող մեծամասնութիւն չեն կազմում:

—Թիւրքիայի հայոց լրագիրները հաղորդում են որ մայիսի 9-ին տեղի ունեցաւ Փարիզում «Հայկազեան ուսումնասիրաց» ընկերութեան եռամսեայ նիստը, որին ներկայ էին անդամներից շատերը:

—Արտասահմանում հրատարակվող հայոց լրագիրները հաղորդում են, որ մայիսի 18-ին Մանչէստրի եպիսկոպոսի աթոռակալութեան հանդիսին ներկայ էր՝ և հայոց Սուքիաս վարդապետ Պարոնեան, որ ներկայանալով եպիսկոպոսին իր ժողովրդի կողմից, չնորհաւորել է նրան իր աթոռակալութեան առիթով:

—Շուտով կայանալու է չվէդական պրինց Օսկարի նշանադրութիւնը Ուէլսի իշխանի Լուիզա մեծ աղջկայ հետ: Հարսնացուն արդէն ուսումնասիրում է չվէդական լեզուն:

—«Times» լրագրի մէջ կարդում ենք հետևեալը յունաց նոր մինիստրների մասին: Ներքին գործերի մինիստր Լօմբարդիս և արդարադատութեան մինիստր Վուլիպիոտիս արդէն եղել են անդամներ Տրիկուպիսի նախկին կաբինէտի: Արտաքին գործերի մինիստր Դրագումիս իր կրթութիւնը ստացել է Փարիզում, օրէնսգէտ է և սիրված է ամենքից: Պատերազմական մինիստր Տէատոկիս ցոյց է տուել իր վարած պաշտօններում կառավարչական ընդունակութիւններ, լաւ հռետոր է և ծանօթ է անգլիական լեզուին:

ԹԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Էմիլ Զօլա պատրաստում է մի նոր նշանաւոր վիպասանութիւն «La terre» վերնագրով: Այդ գրուածքի մէջ հեղինակը դուրս է բերելու գիւղական կեանքը, և ցոյց է տալու այդ կեանքի բոլոր կողմերը և այն կապը, որ կայ գիւղացու և հողի մէջ: Վիպասանութեան մէջ կը յարուցվի հողային-սոցիալական խնդիրների մի շարք, ցոյց կը տրվի գիւղացու քաղաքական նշանակութիւնը և այլն: Քաղաքական-տնտեսական հարցերի լիակատար կերպարանքը ներկայացնելու համար Զօլա մտադիր է գրելու դարձեալ ուրիշ չորս վիպասանութիւններ, երկաթուղու, զինուորական, ֆինանսական և հրապարակախօսական կեանքից:

* * *

Պաուլ Ֆօն-Բիտտէր կտակել է գերմանական խնայի համալսարանին 150 հազար ռուբլի: Այդ գումարը, համաձայն կտակողի կամքին, նշանակված է կենդանական թագաւորութիւնից դանազան քննութիւններ և հետազօտութիւններ անելու Դարվինի թէօրիայի ուղղութեամբ, որ կտակողի կարծիքով չնորհել է ներկայ գիտութեանը ամենամեծ ոյժ և նորութիւն:

* * *

Փարիզի հասարակական Առողջապահութեան յանձնաժողովը նորերումս քննեց քաղաքի բոլոր կաթնային ֆիրմաների կովերին, և գտաւ որ կենդանիների մեծ մասը վարակված է թոքախտով, նեղ և խոնաւ գոմերում մնալու պատճառով: Որովհետև հիւանդ կովերի կաթը անպայման վնասակար է մարդկանց գործածութեան համար, ուստի յանձնաժողովը վճռեց մի քանի հազար կովեր հեռացնել Փարիզից:

* * *

Էսնայի այժմեան ժայթքումը դանազանվում է նախորդներից իր զարմանալի ոյժով: Ժայթքումները միանում են երկրաշարժների հետ, որոնց ժամանակ անդադար լսելի են լինում ստորերկրեայ թնդիւններ: Հրաբուխի բերա-

նից դուրս են ցայտկում մեծ քարեր։ Լավայի ահագին հոսանքները մօտեցել են արդէն մերձակայ գիւղերին և Կատանիա քաղաքին, որտեղից ժողովուրդը փախչում է։ Շաղանակի ահագին անտառներ այրվել և փչացել են արդէն։ Քանդված են շատ չինովնիկներ։ Կատանիայի կողմերից Էտնայի վրա նայած ժամանակ մարդուս ներկայանում է մի սոսկալի և ահռելի տեսարան։ Ահագին բազմութիւն, նոյն իսկ արտասահմանից, մանաւանդ անգլիացիք, դալիս են նայելու այդ զարհուրելի տեսարանին։

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՍԻՍԱՑԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 26 մայիսի։ Ստացած տեղեկութիւններին նայելով նոր երկաթուղու բէնտի ստորագրութիւնը հասել է երեք միլիարդ բուբլու։

ՊԼԵՇՏ, 26 մայիսի։ Երէկ այստեղ անկարգութիւններ տեղի ունեցան, ուզեցին ցոյցեր անել գեներալ Եանսկու դէմ, որը ուղևորվում է Վիէննա։ Բայց ոստիկանութիւնը և զօրքը դիմադրեցին. այնու ամենայնիւ խանութների ապակիները ջարդված են։ Քանի մի մարդիկ վիրաւորված և 30 հոգի էլ ձեռբակալված են։

ԱԹԷՆՔ, 26 մայիսի։ «Բէյտէրի» գործակալութեան հեռագիրը հաղորդում է, որ հինգ պետութիւնների ներկայացուցիչները այսօր յանձնեցին յոյն կառաւարութեանը մի յայտագիր, որի մէջ յայտնում են ծովեզրեայ պաշարման վերցնելու մասին։

ՓԱՐԻԶ, 26 մայիսի։ Թագաւորաղն Ժէրօմ Նապոլէօնը պատգամաւորներին ուղարկած իր նամակում բողոքում է աքսորման դէմ, որը սպառնում է իրան ոչ թէ իբրև գահի համար իրաւունք յայտնողի, այլ իբրև Նապոլէօնների տան գլխին։ Թագաւորաղնը իր յոյսը դնում է ժողովրդի վրա, որը, իր խօսքերին նայելով, չուտով կը ճանաչի իր ճշմարիտ բարեկամներին։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 27 մայիսի։ «Journal de St. Petersbourg» լրագիրը հաղորդում է հաստատ աղբիւրներից, որ Բուլգարում ոչ մի դաւադրութիւն չէ եղել. իշխան Ալէքսանդրի կեանքին ոչ մի վտանգ չէ սպառնում։ Ձերբակալված կապիտան Նաբոկով խաղաղ մարդ է և յարգանքի արժանի։ Դաւադրութեան մասին տարածված լուրի նպատակն է եղել ազդել ընտրողների տրամադրութեան վրա և այս հնարքը պէտք է կցել այն միջոցներին, որոնք բուլգարական կառաւարութիւնը գործ է ածում նրա համար, որ կրկին անգամ ապացուցանէ իր սրտի անկախ բնաւորութիւնը։ Մի և նոյն լրագիրը մատնացոյց է անում այն բանի վրա, որ «Բէյտէրի» գործակալութեան հեռագիրը Տխան-Ցզինից ռուս-չինական յարաբերութեան լարված դրութեան մասին, դուրս է բերված այնպէս, որ այնու ամենայնիւ կարելի է երկնչել տարաձայնութեան ծագելուց. սակայն ռուս-չինական յարաբերութիւններում չէ պատահել այնպիսի մի բան, որը կարողանար վտանգ ծագեցնել։

ԼՕՆԴՕՆ, 27 մայիսի։ Համայնքների ժողովը մերժեց երկրորդ ընթերցման միջոցին 341 ձայնի մեծամասնութեամբ 311 ձայների դէմ Իրլանդիայի կառաւարութեան օրինագիծը։

—

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱ

Մայիսի 28-ին

Ռուսաց 1 բուբլ Լ. օնդօնի վրա արժէ		$23^1/_2$	պէնս
— — Համբուրգի վրա	—	$199^3/_4$	պֆ.
— — Փարիզի վրա	—	$247^1/_2$	սան.
Ոսկի — արժէ	— —	8 ր. 39	կ.
Մաքսային կուպօններ	— . . .	8 » 39	»
Այծաթ — —	— . . .	1 » 25	»
Բօրսային դիսկօնտներ	— . . .	$3^3/_4$ և $6^0/_0$	
Պետական. բանկ. 5% տոմս 1-ին չրջանի		100 » 75	կ.
— — — — 2-րդ	—	100 » 75	»
— — — — 3-րդ	—	100 » 75	»
— — — — 4-րդ	—	100 » 87	»
— — — — 5-րդ	—	100 » 87	»
Արևելեան 5% փոխառութ. 1-ին չրջ.		100 » 75	»
— — 2-րդ	—	100 » 75	»
— — 3-րդ	—	100 » 75	»
Նկրքին 5% առաջին փոխառութ.		241 » 50	»
— երկրորդ	—	225 » 50	»
$5^1/_2$% բէնտա		105 » —	»
Ոսկեայ բէնտա.		186 » 50	»
Նոր կօնսօլիդած փոխառութիւն. .		157 » —	»
5% գրաւական թղթեր կալուած. փոխ. կրեդ. ընկ.		162 » 50	»
$5^1/_2$% գրաւական թղթեր խերսօնի կալուած. բանկի.		99 » —	»
6% գրաւակ. թղ. Խարկովի կալ. բանկ.		102 » 62	»
— — Պօլտավայի —	—	102 » 75	»
— — Պետ. Տօլակ. —	—	102 » 50	»
— — Կիեւի —	—	102 » 50	»
— — Մօսկվայի —	—	103 » —	»
— — Բեսարաբ. Տավր. —		102 » —	»
— — Նիժ. Սամար.	—	102 » 50	»
— — Վիլնայի	—	102 » 50	»
— — Թիֆլիսի — 27 և 43 տ.		97 » —	»
— — Ռոստայսի-18 և 43 տ.		97 » —	»
Վ. օլժսկո-Կամսկի բանկի ակցիաները		518 » —	»
Ռուսաց երկաթուղիների գլխաւ. ընկ.		258 » 50	»
Ռիբինսկ-Վ. օլոգդայի ընկ.		84 » 75	»
Ս. Պետերբուրգի քաղաքային օրլիգացիաներ.		93 » —	»
Մօսկվայի քաղաք. օրլիգացիաներ .		95 » 25	»
Օդէսայի — — .		96 » —	»

Ս. Պետերբուրգի բօրսայի տրամադրութիւնը հանդարտ է։

ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

ՎԵՐԻՆ-ԱԳՈՒԼԻՍ. Տ. Հայուհի. Ստացանք ձեր ուղարկած 15 բուբլի և 15 կոպէկ։

ԲԱՇՆՈՐԱՇԷՆ. Տ. Ա. Շատ ցաւում ենք, բայց ոտանաւորներ չենք տպում։

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.

(N. PAQUET ET COM.)

Շորեքշաբթի, յունիսի 11-ին, „ԱՐՄԵՆԻԱ“ (ARMENIE) շոգենաւը, նաւապետ ՇԷՕԼՏ (SCHEULT) դուրս կը գնայ Բաթումից դէպի Տրապիզոն, Օրդու, Սամսօն, Կ. Պոլիս և Մարսէյլ։ Տեղեկութիւնների մասին պէտք է դիմել ընկերութեան գործակալներին. Բաթումում պ. Գարանիօնին և Թիֆլիսում պ. Բէնօին, նախկին Արծրունու դպրեվանքում, № 103. 1—4

ԽԱՐԿՈՎ ԳՆԱՅՈՂՆԵՐԻՆ

առաջարկում ենք ՐՈՒՖԻ առաջնակարգ Օտել (հիւրանոց)

Բիբնայա փողոցում։ Նօմէրները 75 կոպէկից մինչև 5 բուբլի։ Քաղաքիս կառապանները անախորժութեամբ տանում են վակզալից ճանապարհորդներին, որովհետև այստեղ „на чай“ չեն տալիս։ Իսկ մեր հիւրանոցն ունի վակզալում սեփական կառք։ Օտելում կայ ՎԱՆՆԱ, կան ռուս և արտասահմանի ԼՐԱԳԻՐՆԵՐ և ԲԻԼԻԱՐԴ։ Առաջնակարգ ՐԷՍՏՕՐԱՆ։ Խոհանոցը գտնվում է Մօսկվայի էրմիտաժ բէստօրանի հմուտ խոհարարի ձեռքում։ Ճաշը 60 կոպէկից մինչև 1 բուբլի 50 կոպ.։ Նախաճաշիկ 30 կ., ընթրիք 40 կ.։ Տան օրից ուրբի մնացողներին անում են զիջումներ։ Գնները ձեռնտու են։

Հասցէն ՐՈՒՖ, Բիբնայա փողոց ԽԱՐԿՈՎՈՒՄ։
Բէստօրանի մէջ կայ „Օրկէստրիօն-Մօնստր“։ 3—10 (Ե. շ.)—(Հ)

COMPAGNIE DES MESSAGERIES MARITIMES

PAQUEBOTS-POSTE FRANÇAIS.

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

(ՄԵՍԱԺԸՐԻ ՄԱՐԻՏԻՄ)

Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԷԼԻ և ԲԱԹՈՒՄԻ մէջ և փոխադարձ։

Հինգշաբթի 29-ին մայիսի ԲԱԹՈՒՄԻՑ դուրս կը գնայ CAMBODGE (ԿԱՄԲՈՋ) շոգենաւը, նաւապետ CAMOIN (ԿԱՄՈՒԷՆ), մտնելով Կ. Պոլիս և Զմիւռնիա և յարակցելով Եաֆա, Պօրտ-Սէյիդ և Ալէքսանդրիա գնացող ընկերութեան շոգենաւերի հետ։

Տեղեկութիւնների մասին պէտք է դիմել ԲԱԹՈՒՄ և ԲԱԳՈՒ պ. պ. ԷԼԼԷԲՍ ԲՈՒՐԿՀԱՐԴԻՆ և ԸՆԿ. իսկ ԹԻՖԼԻՍՈՒՄ ԳԷՈՐԳ ՀԵԶՈՒԲԵԱՆ ՀԵԶՈՒԲԵԱՆՑԻՆ։ 3—3

Въ редакціи газеты „МШАКЪ“ продаются слѣдующія брошюры:

1) „Экономическое Положеніе Турецкихъ Армянъ“, публич. лекція Д—ра Григорія Арцруни, переводъ съ армянскаго А. Аракелянца. Цѣна 25 коп.

2) Die Oekonomische lage der Armenier in der Türkei, ein öffentl. Vortrag von Dr. Grigor Arzruni übersetzt von A. Amirchanjanz. Preis 25 kop.

3) Die Hungersnoth in Türkisch-Armenien, ein Vortrag von Dr. Grigor Arzruni, übersetzt von Amirchanjanz. Preis 20 kop.

Иногородные, желающіе получить брошюры, благоволятъ присылать по 30 коп. почтовыми марками, за каждую брошюру.

Адресъ. Тифлисъ, Редакція „Мшакъ“, или Tiflis, Redaction „Mschak“.

7—25

ԱՄԵՆԱԿԱՐԵՒՈՐ ՏԵՂԵԿԱԳԻՐ վաճառականական դասակարգին պատկանող իւրաքանչիւր անձի համար ու ՄԱՏՉԵԼԻ ՁԵՌՆԱՐԿ առևտրական հաշուարարութիւնները առանց ուսուցչի օգնութեանը ուսումնասիրելու համար։

Ս. ՄԱՆՈՒԷԼԵԱՆԻ

ՁԵՌՆԱՐԿ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՀԱՇՈՒԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ

Վաճառվում է կենտ. գրավաճառանոցում, եղբարց Ծօվիանօվների բանկային գրասենեակում և հեղինակի մօտ. Тифлисъ, Лабораторная, № 11: Օտարաքաղաքացիք դիմում են վերջին հասցէով՝ С. П. Мануэльянцу.

Գինն է ամեն տեղ 2 բուբլի։

22—30

ԹՈՅԼՏԻՈՒԹԵԱՄԲ Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՄԱՅՐԱՔԱՂԱՔԻ ԲԺՇԿԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

Էլէկսիր-Melange. Մազերի արագ և առատ բուսացնելու համար և նրանց պահպանելու թափվելուց։ Գինը 2 ր. սրուակի համար, գործածութեան հրահանգի հետ միասին, ռուսերէն, ֆրանսերէն և գերմաներէն լեզուով։

Բալզամ—Eugénie. դափնեա և պտակի փունջի ծաղիկներից, երեսին, շլինքին և ձեռքերին քնքշութիւն և փափկութիւն, նոյնպէս և մարմարիօնի սպիտակութիւն տալու համար, շուշանի և վարդի անուշահոտութեամբ, նոյնպէս կաշու անհարթութիւնը և բիծերը ոչնչացնելու։ Գինը 1 ր. 75 կ. սրուակի համար, գործածութեան հրահանգով ռուսերէն, ֆրանսերէն և գերմաներէն լեզուներով։

Կարմրադեղ—Eugénie. հեզուկ, թուշերին և ականջներին բնական վարդի գոյն տալու, որ չէ փոխվում էլէկտրական լուսաւորութեան ժամանակ և որ չէ սրբվում երեսի քրտինքից։ Առաջարկվում է մանաւանդ թատրօնների և պարահանդէսների համար։ Գինը 1 ր. 50 կ. սրուակի համար, գործածութեան հրահանգով ռուսերէն, ֆրանսերէն և գերմաներէն լեզուով։

Այդ բոլոր երեք կօսմէտիական արդիւնքները բժշկական վարչութեան վկայութեամբ, չեն պարունակում իրանց մէջ որ և է վնասակար նիւթեր։ Բէրթա Ռիս.

ԱՐՏՕՆՈՒԹԻՒՆ ՍՏԱՑԱԾ ՊՕՄԱԴ

իսկական «Pasta Eugénie», գերազանց միջոց կաշու ամեն տեսակ բծերի, և երեսի վրա պատահող ուրիշ անախորժ երևոյթների դէմ։ Տալիս է երեսի գոյնին երիտասարդական թարմութիւն և գեղեցկութիւն։ Գինը մի սրուակի համար 1 ր. 60 կ.

Քինին-գլիցէրինեան պօմադ պերուական բալզամից, մազերը սնդացնելու, խտացնելու և մեծացնելու համար։ Գ. 2 ր. սրուակի համար։

Ձեռքերի պօմադ։ Գինը սրուակի համար 1 ր. 30 կ.։ Իւրաքանչիւր սրուակի վրա գտնվում է պաշտպանողական դրոշմ, մի «հրեշտակ» և հնարող ստորագրութիւն «Bertha Ries».

Իսկական «Poudre-Eugenie» սպիտակ և վարդագոյն փոշի. Գ. արկղիկի, վրձինով 1 ր. 50 կ., առանց վրձինի 1 ր. 20 կ.

Մազերի ներկը երեք գոյնի. սև, շագանակագոյն և բաց-շէկ. Գ. արկղիկի 3 ր. Ներկը «Բիսմարկ» դործարանի։

Գլխաւոր պահեստ ԹԻՖԼԻՍՈՒՄ գտնվում Վ. Գրիվնակի դեղատան ապրանքների մագազինում, «Վօնդոն» հիւրանոցի տակ, Զուբալովի տանը։ 40—100

ԼՈՒԱԳԵՂ

Ս. Հ. ՄԻՐԶԱՅԵԱՆՑ ԵՒ ԸՆԿ.

ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼՈՒՄ

Առաջարկում է, իբրև ամենազօրեղ միջոց՝ ճանճերի, լուերի, բաղլինջների, մրջիւնների, ցեցի, տարականների, (ուտիճի) և այլ միջատների դէմ։ Վաճառվում է պուդերով պարկերի մէջ և մաս մաս թղթեայ արկղիկներով, արժողութեամբ 5 կ., 10 կ. և 20 կ. իւրաքանչիւրը։ Արկղիկներից իւրաքանչիւրը փաթաթված է առանձին թերթում, որ պարունակում է լուագեղի գործածութեան հրահանգը։

Գլխաւոր դէպօ (պահեստ) Թիֆլիսում. ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԿՈՎԿԱՍԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԴԵՂԱՑԻՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՌԵՒՏՐԻ ՊԱՀԵՍՏՈՒՄ։

Վաճառվում է մաս մաս նոյնպէս ՇԱՀ-ՊԱՐՈՆԵԱՆՑԻ դեղատան և ԲՕՍՏՕՄԵԱՆՑԻ դեղային խանութի մէջ, նոյնպէս և այլ դեղատներում և խանութներում։

3—3

Дозволено цензурою, Тифлисъ 28 Мая 1886 г. Типографія Канцеляріи Главнонач. Гражд. час. на Кавк., Лорисъ-Меликовская у. д. каз